

ԲԱՅԻ ԱՆԴԵՍ ԶԵՎԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՅԼ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՖԻՆՆԱ-
ՌԻԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

Հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզուների քերականական կազմիչ-ների միասնական ծագման հարցին անդրադարձել են այնպիսի լեզվաբաններ, ինչպիսիք են Ա. Տրոմբետին, Վ. Իլիչ-Սվիտիչը, Ա. Դոլգոպոլսկին, Ա. Բոմհարդը, Ս. Ստարոստինը և այլք: Ֆիննաուգրական լեզուների քերականական կազմիչ-ների համեմատությունը հայերենի կազմիչների հետ բացահայտում է նոր իրողություններ: Ի թիվս այլ ընդհանրությունների, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հայերեն բայի անդեմ ձևերի համեմատությունը հ.-ե. այլ և մի շարք ֆ.-ուգր. լեզուների բայի անդեմ ձևերի հետ:

Անորոշ դերբայ. հունգարերենի և մի շարք հնդեվրոպական լեզուների անորոշ դերբայի կազմության մասնությունը վաղուց է նկատվել: Անորոշ դերբայը հունգարերենում ունի -ni, -eni, -ani վերջավորություն (aszni «չորանալ», furni «փորել», lenni «լինել», nezni «նայել»): Հմմտ. գերմ. bringen, singen, trinken, հ.անգլ. bringan (ն.անգլ. bring), bindan (bind), drincan (drink), feohtan (fight), ceosan (choose), beran (bear), հինդի बोलना [bolnā] «խոսել», जलना [jalnā] «վառվել», देखना [dekʰnā] «նայել», मरना [marnā] «ծեծել», भगना [bhagnā] «փախչել» և այլն: Հունգարերենում մի շարք բայեր անորոշ դերբայի վերջավորությունից առաջ կարող են ստանալ -al, -ol, -ul, -öl, -el ձևությամբ շարքը ներկայացնող վերջավորություն: Օրինակ csinalni «շինել, սարքել», jarulni «մոտենալ», karcolni «քերծել», tüzelni «վառել», kartolni «քորել», kerulni «խուսափել, շրջանցել»: Առանց-ni վերջավորության՝ հունգ. csinal, jarul, karcol, kerul:

Պերմյան ճյուղի լեզուներում՝ կոմի և ուդմ. լեզուներում անորոշ դերբայի վերջավորությունն է -ны, -ыны: Օրինակ՝ կոմի килъыны «կլկվել», кодзлавны «շղղալ» (կայծ), лэдэны «բաց թողնել» (լոծ), лэдзавны «արծակել», ուդմ. бызьыны «վազել», гындыны «գլորել» (գունդ), кабыны (կապ), калтыны (կալ) «բռնել, որսալ», кесяны «պատռել» (կես), луьны «լինել, դառնալ», лэзьыны «թողնել, արծակել», матынскыны «մոտենալ», пызырмыны «փշրվել», пыктыны «փքվել, ուռչել», пырсьыны «փոթկալ», шымыръяны «հավաքել»:

սեղմել» (ծմռել), փымыртыны «կնճռոտել, կուչ ածել, կծկել» (ծմրթել), ыбыны «կրակել» (խփել), бекыраны «թեքվել, խոնարհվել» (բեկել)*:

—Ны վերջավորությունը հնում եղել է —ыны, այսինքն՝ ձայնավորը ժամանակի ընթացքում սղվել է: Պատմականորեն կոմի вошны, гижны, инны ձևերն առաջացել են вошыны, гижыны, инны ձևերից: Ուղմուրտերենում կան անորոշ դերբայի -аны վերջավորությամբ բայեր, որտեղ -а-ն առանձին մասնիկ է և պատմականորեն ծագում է -ал- ձևից (лобаны < *лобалны «թռչել», кутаны < *куталны «հյուսել», вераны < *вералны «ասել»:

Կոմի լեզվում л-ն հայտնի օրինաչափությամբ բաղաձայնից առաջ կոշտանալով՝ վերածվել է в-ի, սակայն պահպանվել է բարբառներում՝ կոմի пыравны (բրբռ. пыралны), ուղմ. пыраны «ներս մտնել», կոմի лэбавны (բրբռ. лэбалны), ուղմ. лобаны: Ուղմուրտերենում л-ն վերականգնվում է ձայնավորից առաջ. (мон) лобало «ես թռչելու եմ», лобаломы «թռչելու ենք», և այլն, հետևաբար կոմի լեզվում ավելի հին են л բաղաձայնով ձևերը՝ лэдзалны > лэдзавны «արծակել», муналны > мунавны «գնալ»¹:

Ինչպես հունգարերենում (-al կան նրա ենթաձևերները), կոմի և ուղմուրտերեն լեզուներում ևս՝ անորոշ դերբայի -ны, -ыны վերջավորությամբ որոշ դեպքերում նախորդում է -ал վերջավորությունը: Ուշագրավ է հին ռուս. мерл(а) есмь - գրաբ. *մեռեալ եմ* օրինակը. որից երևում է, որ գրաբարյան այս ձևերը շատ հին են²: Տվյալ օրինակում мерл(а) ձևը համարժեք է գրաբարյան անցյալ դերբային: Այս դերբայը պահպանվել է բուլղարերենում՝ плета «հյուսել» - плел «հյուսած», река «ասել» - рекъл «ասված», ядеш «ուտել» - ял «կերած»: Հայտնի է, որ ներգործական սեռի բայերից կազմվող անցյալ դերբայը գրաբարում կարող էր արտահայտել ներգործական և կրավորական սեռի իմաստ, այսինքն՝ *գրեալ* նշանակում էր «գրել, գրվել, գրած, գրված», իսկ չեզոք սեռի բայերը միայն չեզոք սեռի իմաստ էին արտահայտում՝ *անցեալ* = անցած:

Հայերենի -լ մասնիկով վերջացող դերբայների և սլավոնական -лъ -ով վերջացող անցյալ կատարյալի կապը վաղուց է նկատվել: Թ. Ղարաբյուլյանը մանրամասն ներկայացրել է հայերենի -լ քերականական կազմիչի մասին եղած տեսակետները: Նա նշում է, որ ք. Պատկանյանը այն կարծիքին է, որ /

* Սկստելի է նաև հայերեն և ֆիննաուգրական արմատների նմանությունը, որն այս հոդվածի ընթացքում նյութը չէ՝ кодз- *կայծ*, лэдз- *լոյծ*, гынд- *գունդ*, каб- *կապ*, кал- *կալ*, кэс- *կես*, пык- *փուր*, бек- *բեկ* և այլն:

¹ В. И. Алатырев. Вопросы удмуртского языкознания, 1959, с. 176.

² Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն: Հին շրջան, Եր. 1961, с. 226.

վերջավորությամբ դերբայները, որոնք դրվում են ներկայի կամ անցյալի հիմքի վրա, կարելի է համեմատել եկղ-սլավոնական լեզվի չ-ով դերբայների հետ³։ Պատկանյաճը անորոշ դերբայի լ-ն համեմատել է նաև լատին. –re վերջավորության հետ։ Անորոշ դերբայի չ-ն լատին. անորոշ ձևի r-ի հետ համեմատել է նաև Պետերմանը, իսկ *ել, ալ, իլ, ուլ* դերբայական մասնիկները վերջինիս կարծիքով առաջացել են *ել, գալ, գոլ, լինել* բայերից։ Ըստ Ա. Թոմսոնի անորոշ դերբայի չ և անցյալ դերբայի չ վերջավորությունը ունեն միևնույն ծագումը և առաջացել են հ.-ե. *-lo-ից։ Ն. Մառի կարծիքով գրաբարի անորոշ դերբայի մասնիկները մեկ էական բայի (*եալ*) տարբերակներն են, որից գոյացել է նաև անցյալ դերբայը՝ *եալ* վերջավորությամբ⁴։ Հունգարերենում և մի շարք այլ ֆ.-ուգր. լեզուներում –l մասնիկով, որի ծագումը վերագրվում է ուրալյան նախալեզվի շրջանին⁵, այսօր էլ բայեր են կազմվում, հունգ. szó «բառ» - szólni «խոսել», kasza «գերանդի» - kaszalni «հնձել», sor «շարք» - sorolni «թվարկել»։ Այս կազմիչը, հայերենի –ել/-եալ կազմիչի նման, երկակի բնույթ ունի, և նրանով կազմված բազմաթիվ բայեր կան, որոնք համապատասխանում են հայերենի տարբեր սեռերի բայերին, օրինակ՝ հունգ. görbe «ծուռ» - görbülni «ծովել», köze «միջև» - közölni «կիսվել», füst «ծուխ» - füstölni «ծխալ», forrni «եռալ» - forralni «եռացնել», fűrés «սղոց» - fűrészelni «սղոցել»։ Այս վերջավորությունը, հավանաբար, համարժեք է հայերենի –ել/-եալ մասնիկին (անորոշ դերբայ, գրաբարյան անցյալ դերբայ, որը համապատասխանում է ժամանակակից հայերենի վաղակատար և հարակատար դերբայներին)։

Հայերենում ունենք բարձրանալ, մեծարել, կամենալ, զարդարել, վերածել, տարածել տիպի կազմություններ։ *Վերածել*-ը բարբառային տարբերակում կարող է մասերի բաժանվել՝ *վեր եմ ածում*, ինչպես բաց եմ անում։ Այս տիպի որոշ բայեր գերմաներենում խոնարհվելիս բաժանվում են բաղադրիչների՝ aufmachen /ich mache die Tür auf/, zumachen։ Այսպիսի կազմություններ կարող էին ցանկացած հարադիր բարդությունից առաջանալ, ասենք՝ բաց անել, դուրս անել։ Հետևաբար, վերը նշված բայերի –անալ, –ենալ, –արել վերջավորությունները հայերենի առնել բայի տարբեր ձևերից են ծագում (*առն- > ան-/են-/ար*)։

Նշանակում է, անորոշ դերբայի վերջավորությունը հունգարերենում, կոմի և ուղմուրտերեն լեզուներում ունի «անել» իմաստը։ Պատմականորեն նույն իմաստն ունեն հայերեն բայերի –անալ, –ենալ, –արել վերջավորությունները, թեպետ ժամանակակից հայոց լեզվի կանոններով այս վերջավոր-

³ Թ. Ղարազյուլյան, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Ե., 1961, շ. 174.

⁴ Նույն տեղում, էջ 173։

⁵ П. Хагду, Уральские языки и народы, 1985, М., с. 334.

րությունը բաժանվում է երկու կազմիչի, ինչպես *անել* և *արել* բայերն են բաժանվում երկու կազմիչի: Գ. Ղափանցյանը գրում է, որ հայերենի *պաշար, սատար, խաթարել, խանգարել* և նման այլ բառերի *-ար* ածանցը գալիս է խուռերենից և գտնում է, որ այն պետք է չփոթել հետագայում հայերենում կազմակերպված (*) *-ար* մասնիկի հետ, որը տեսնում ենք *մեծարել, զարդարել* և նման այլ բառերի մեջ⁶: Մինչդեռ այս երկու դեպքերի տարբերությունն այն է, որ առաջիններում (*խաթարել, խանգարել*) արմատի իմաստը մթազնաժ է նրա այլևս անգործածական լինելու պատճառով:

Յ.-Ե. Լեզուներում գտնում ենք անորոշ դերբայի այսպիսի վերջավորություններ՝ հինդի [bolnā], [jalnā], [karnā], գերմ. bringen, hangen, neigen «ծռել», հ.անգլ. bringan, ceosan, findan, հոլ. kennen «գիտնալ», gissen «զուշակել», houden «պահել», gieten «լցնել», որոշ Լեզուներում ո-ի անկումով՝ իսլ. segja «ասել», geisla «շողալ», շվեդ. hänga «կախել», kola «մեռնել», kōra «աշխատել»:

Այստեղ անհրաժեշտ է խոսել մի կարևոր օրինաչափության մասին: Զերականական կազմիչների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ դրանք կարող են քերականական իմաստը փոխել և հայտնվել մեկ այլ քերականական կազմիչի դերում, այսինքն՝ տեղի է ունենում *քերականական տեղաշարժ*: Կարծում ենք, նույն *-ան/-են* քերականական կազմիչը, որը գտնվում է գերմանական խմբի Լեզուներում, առկա է նաև սլավոնական Լեզուներում, բայց ոչ որպես անորոշ դերբայի, այլ կրավորական սեռի անցյալ ժամանակի դերբայի վերջավորություն. ռուս. сдел-ан/-ано/-анный, сказано:

Սառսկրիտում միևնույն մասնիկով է կազմվում որոշ բայերի անցյալ ժամանակի կրավորական սեռը՝ पर [par] «լցնել» - पूण [pūṇa], भञ्ज [bhāñj] «կտրել, ծռել» - भग्न [bhāgna], त्वर [tvār] «շտապել» - तूर्ण [tūrṇa], तुष्ट [tuṣṭ] «ծեծել» - तुन्न [tunna]: Եիշտ նույն կերպ անգլերենում որոշ անկանոն բայերի անցյալի դերբայի (Participle II) վերջավորությունն է -en (*-ան/-են* միևնույն կազմիչի ենթածնույթներն են). chosen, risen, taken, spoken, written: Գերմաներենում ուժեղ բայերի ճնշող մեծաձայնության անցյալի դերբայը ևս ունի -en վերջավորություն՝ gebunden, gefallen, gehangen, gekommen, հոլանդերենում drinken – gedronken «խմել», houden – gehouden «պահել», bakken – gebakken «թխել»:

Ռոմանական Լեզուներում անորոշ դերբայի վերջավորությունը որոշակի աղերս ունի հայերեն *ար-ել* ձևի հետ. լատին. gelāre, negāre, volere, իտալ. andare, prendere, finire, իսպ. lavar, querer, vestir:

⁶ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն: Հին շրջան, Եր. 1961, էջ 116:

Յ.-Ե. լեզուները հայերենի հետ համեմատելիս ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հայերեն *առնել (անել)* բայը և նրա տարբերակները գրեթե չեն գտնվում հ.-ե. մյուս լեզուներում: Իտալերեն *fare*, անգլերեն *do*, ռուսերեն *делать*, հինդի *करना* [karnā] հայերեն *առնել* բայի զուգահեռները չեն: Այս արմատից եզակի օրինակներ են պահպանվել հ.-ե. այլ լեզուներում, ռուսերենում՝ *раз-ор-ить* բառի մեջ, իսլանդերենում՝ *anna* «կարողանալ անել», *erinda* «կատարել, անել», *erinda* «գործ», շվեդ. *ärande*, նորվ. *ærand* «գործ»: Սակայն ոչ մի լեզվում իր նախնական նշանակությամբ այս արմատն այնպիսի լայն կիրառություն չունի, ինչպես հայերենում:

Առնել արմատի *ան-* տարբերակը հայերենում նորանմծություն չի կարելի համարել, քանի որ այն պահպանված է հ.-ե. լեզվաընտանիքում ամենահնամտիպ լեզվաճյուղերից մեկի՝ անատոլիական ճյուղի մեջ, օրինակ՝ խեթ. *anne/a*, պալ. *anniie/a*, սեպ.-լուվ. *anai-* «անել, աշխատել, կատարել» նշանակությամբ, *ար-* տարբերակը՝ լիկ. *ara* «ծես, արարողություն», *erayazije-/arayazije-* «հուշարձան» (հետաքրքիր բառ, որը հայերեն *արուած* բառին է նմանվում): Խեթերենում ամորոշ դերբայի օրինակներ են՝ *adanna* (*ed-* արմատից) «ուտել», *appanna* (*ep-*) «վերցնել», *kunanna* (*kuen-*) «սպանել», *hukanna* (*huek-*) «երդվել», *waganna* «կծել», *harkanna* «փլվել», *tahsanna* «կտրել, ճեղքել», *hananna* «հանել /ջուր/»⁷: Թ. Ղարազյուլյանը նշում է, որ դեռևս Ֆ. Բոպը նկատել է, որ սանս. *ana* և հուն. *ανω* կազմություն ունեցող բայերը շատ նման են հայ. *աննծ*-ով բայերին (*բուծաննծ* և այլն): Բոպը նշում է, որ հայ. *ն* ածանցը համապատասխանում է սանս. *na*, հուն. *νη*, *νδ* ածանցներին⁸:

Առ-/ար-/ան- արմատը, ամորոշ դերբայի վերջավորություն լինելուց բացի, հանդես է գալիս որպես *nomen agentis* կոչվող բառերի վերջավորություն, կամ քերականական կազմիչ, որը նշում է գործողություն կատարողին՝ հայերեն *ներկարար*, *շինարար*, որոշ բառերում արմատի անգործածական լինելու պատճառով իմաստի մթազնուումով՝ *գութան*, *հնձան*, *մաշար*, *խաթար*, սանս. *रक्षितर* [rakṣitar] «պաշտպան», *ढातर* [dātar] «տվող» (ուղղակյանում *र-*ն ընկել է), հոլ. *leraar* «ուսուցիչ», *arbeider* «բանվոր», նորվ. *arbeider* «բանվոր», *løgner* «ստախոս», հ. անգլ. *drincere* «խմող», *sangere* «երգող, երգիչ», անգլ. *swimmer*, *writer*, ռուս. *звонарь*, *пахарь*, *пекарь*, բուլղ. *хлебар* «հացթուխ», *млекар* «կաթնավաճառ» լատին. *genitor*, *salvator*, *saritor* իտալ. *autore*, *scrittore*: (Լատիներենում

⁷ O. Laufenburger, *Hittite Grammar*, ANA ammel DAM, Vol. 4.7, 2008, p. 80 [http://www.premiumwanadoo.com/cuneiform.languages/hittite_Grammar.pdf].

⁸ Թ. Ղարազյուլյան, Յին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Ե., 1961, էջ 69:

գործողություն կատարողին մատնանշող ածանցը համարվում է -tor- ը, սակայն genitor, salvator, scriptor բառերում -it-, -at-, -t- առանձին կազմիչներ են և գտնվում են նույն արմատներով կազմված այլ բառերում՝ gen-it-us, salv-at-io, scrip-t-am: Հետևաբար, վերջավորությունն է -or): Ֆ.-ուգր. լեզուներից բերենք հետևյալ օրինակները՝ ֆինն. leipoa «հաց թխել» - leipuri «հացթուխ», heilua «ճոճվել» - heiluri «ճոճանակ», ajaa «քշել» - ajuri «կառապան», juoma «խմիչք» - juomari «արբեցող», lammas «ոչխար» - lampuri «հովիվ», laiva «նավ» - laivuri «նավաստի», laiska «ծուլ» - laikuri «ծուլ մարդ», էստ. sooma «ուտել» - soomar «որկրամոլ», kala «ծուկ» - kalur «ծկնորս», kangas «գործվածք» - kangur «ջուլիակ», հունգ. tanítani «ուսուցանել» - tanar «ուսուցիչ»:

Կոմի լեզվում -ан (ян) վերջավորությամբ կազմվող դերբայը ցույց է տալիս, թե գոյականը ինչ նպատակի է ծառայում՝ юан (ва) «խմելու ջուր», вурсян (ем) «կարելու ասեղ», пожасян (пач) «հացաթխման վառարան»:

Հայերենում բազմաթիվ ածականներ առաջացել են -ան վերջավորությամբ դերբայներից, որոնք ցույց են տալիս, թե գոյականը ի՞նչ անելու համար է, ի՞նչ է անում (կամ ինչպիսի՞ն է), օրինակ՝ կթան կով, հաչան շուն: Այդ ածականները հետագայում կարող էին գոյականի նշանակություն ստանալ՝ պարան (պար արմատից, որ նշանակում է «պտույտ, շրջան»), ոլորան: Նույնը կոմի լեզվում է՝ панан «գործվածքի հենք», куртан «հնձած մարգագետին»:

Ուղմուրտերենում գտնում ենք -ан, -он ածանցով բայերից կազմված գոյականներ. кораны «հատել» - коран «հատում», кураны «հարսնախոսել» - куран «հարսնախոսություն», косыны «խնդրել» - косон «խնդրանք», кызыны «հազալ» - кызон «հազ», нырулыны «նիրհել» - нырулон «նիրհ» (հմմտ. հայ. -ան/-ոն, կարկատան, կտրոն, գողոն, ծամոն):

Բ. Սերբերենիկովը գտնում է, որ -an (-он) ածանցը գալիս է ուրալյան նախալեզվից (*-n), և այս ածանցի հետ է կապում պերմյան ճյուղի լեզուներում ամորոշ դերբայի կազմությունը, մի քանի այլ դերբայների և բայական գոյականների (отглагольное существительное) կազմությունը Ֆ.-ուգր. այլ լեզուներում⁹: Ֆ.-ուգր. լեզուներում, ինչպես նաև հ.-ե. լեզուներում այս կազմիչով կազմվում են վիճակի փոփոխություն ցույց տվող բայեր՝ ֆինն. ala- «ցած, ներքևի» - alenne «իջնել», kylmä «սառը, ցուրտ» - kylmennee «ցրտել». նորվ. -ne կազմիչով lys «լուսավոր» - lysne «լուսանալ», անգլ. short - shorten «կարճացնել», wide - widen «լայնացնել» (հմմտ. հայ. իջ-ան-ել լուսանալ,

⁹ Б. Серебренников, Историческая морфология пермских языков, М., 1963, с. 154-155.

փորձանալ): Թ. Ղարաբյուլյանը հետաքրքիր դիտարկում է կատարել: Նա նշում է, «որ ներկա ժ. ածանցավոր հիմքերը կազմվում են *ան, են, ն, նչ, չ, աչ, անչ* ածանցներով, որոնք մտնում են արմատի և խոնարհիչի միջև (*զտ-ան-ել, յագ-են-ալ, բա-ն-ալ, հանգ-չ-ել, մարտ-նչ-ել, ծան-աչ-ել, մեղ-անչ-ել*): Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում դրանք անհետանում են (*տես-ան-ել ~ տեսի, տեսեսալ*), որից կարելի է ենթադրել, որ այդ ածանցները ներկայի հիմքում արտահայտել են տևական կերպի նշանակություն, այդ պատճառով էլ անցյալ կատարյալի (աորիստ) հիմքում չեն պահպանվում: Գրաբարում զուգահեռաբար կան *անիծել-անիծանել, ցանկալ-ցանկանալ* ձևերը, որը խոսում է նախկինում գոյություն ունեցած կերպային տարբերակման մասին (տևականություն-ոչ տևականություն)¹⁰: Համանման միջամասնիկներ կան նաև *Ֆ.-ուզր* լեզուներում, որոնք կերպային տարբերակման ցուցիչներ են և կամ եղել են անցյալում: *Ֆ.-ուզր*, լեզուները հարուստ են բայի կերպերով (անկատար, կատարյալ, տևական, ակնթաթային, բազմապատկական և այլն), դրանով հատկապես աչքի են ընկնում պերմյան ճյուղի լեզուները, որտեղ մեկ լեզվում կարող է լինել բայի մինչև անգամ ութ կերպ (կոմի): *Ֆ.-ուզր*, որոշ լեզուներում կերպային տարբերակման ցուցիչ են նաև հայերենի չ դերբայակերտին համապատասխանող մասնիկները (կոմի, ուզմ.), որոնց իմաստը, ինչպես և հայերենում, շատ դեպքերում մթազնաժե:

Առավել բարդ է ֆիններենի անորոշ դերբայը, որն ունի վերջավորության բազմաթիվ ձևեր (I տիպ -a/-ä, II տիպ -da/-dä, III տիպ -la/-lä, -na/-nä, ra/-rā, -(s)ta/-(s)tä): *Հարակատար դերբայ*: Այժմ քննության առնենք հայերենի հարակատար դերբային համապատասխանող դերբայների կազմությունը *Ֆ.-ուզր*, լեզուներում: Երգյաներենում կատարյալ դերբայը (причастие законченного действия) կազմվում է *зь-* վերջածանցի միջոցով՝ *сокамс «վարել» - соказы «վարած», ваямс «խեղդվել» - ваязъ «խեղդված», ловномс «կարդալ» - ловнозъ «կարդացած»*: Մակբայական դերբայը (деепричастие) նույնպես կազմվում է *зь-* վերջածանցով *кундамс «բռնել, որսալ» - кундазъ «բռնած»*:

Նկատված է արդեն, որ հայերենի ատամնային հպաշփականներին (*ժ, ծ, ց*) և *հ.-են,* և *Ֆ.-ուզր*, լեզուներում գրեթե միշտ համապատասխանում են *ս* կամ *զ* շփականները: Առաջին հայացքից անհավատալի է թվում, որ *-зъ* ընդհանրական կազմիչը կապ ունի հայերեն հարակատար դերբայի *-ած* վերջավորության հետ: Խնդիրն այն է, որ հայերենի բարբառների բառային և ընդհանրական իրողությունները ընդունված չէ համեմատել այլ, առավել ևս ոչ հնդեվրոպական լեզուների համանման իրողություններ հետ, եթե դրանք

¹⁰ Թ. Ղարաբյուլյան, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Ե., 1961, էջ 68-69:

գրաբարում չկան: Սակայն կարծում ենք, որ ճիշտ չէ տարածամանակյա վերլուծություն կատարելիս հայերենը դիտարկել առանց բարբառների՝ հիմք ընդունելով միայն գրաբարի լեզվական իրողությունները: Այս մոտեցումն արդեն բավական հնացած է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ համեմատաբանության մեջ քննության նյութ են դառնում նաև այնպիսի լեզուներ, որոնք միայն բարբառներով են ներկայացված:

Ֆ.-ուգր. որոշ լեզուներում հարակատար դերբայի օրինակներ են՝ երգ. артозь «ներկած» (արդ-), керязь «հատած, կտրած» (քեր-ած), киртязь, киртязь «կարճացրած, կրճատված» (կուր-), палозь «վառված» (փայլ/պել-/պլպլպլ), пекстазь «կողպած» (փակ), пеляза «կատաղած» (պելացած), пицезь «այրված» (բոց), пичказь «ապաքինված (վերք)» (բոյժ), порезь «կրծած» (փոր-ած), тапазь «տակնուվրա արած» (թափ-ած), токазь «խոցված, վնասված» (թակ-ած), тороземезь «ուռած» (տոգած), кундатозь «անդամալուծ» (կոնդացած), сырнезь «ոսկեջրած» (ծիրանի): Սոկշաներենում գտնում ենք՝ сирязя «ծերացած», плязя «խելագար, գժված» (պելացած) և այլն:

Դիտարկենք հ.-ե. լեզուների կատարյալ կերպ ցույց տվող որոշ դերբայների կազմությունը: Որոշ ռոմանական լեզուներում անցյալի դերբայը (իտալերենում՝ participio passato) կազմվում է -at-, -it-, -ut- կազմիչով՝ իտալ. mangiato «կերած», finito «վերջացած», seduto «նստած», լատին. donāre «նվիրել» - donātum, vocāre «կանչել» - vocātum, իսպ. herido «վիրավորված», helado «սառած»: Գերմանական ճյուղի լեզուներում գտնում ենք հետևյալը: Իսլանդերենում բայերի մի մասը претерит և причастие II ձևերում ստանում է -t-, -d-, -ð- վերջածանցը, օրինակ՝ vita «գիտենալ» - vitað (причастие II), muna «հիշել» - munað, binda - bundið, hafa - haft «ունենալ», նորվ.՝ -t, -et. gnage - gnagt «կրծել», henge - hengt «կախված լինել», være - vært (<været) «լինել», gyte - gytt «լցնել», skjære - skåret «կտրել», smøre - smurt «քսել, օծել», շվեդերենում՝ brinna - brunnit (супин) «այրվել», gnida - gnidit «տրորել», hava - haft «ունենալ»: Գոլանդերենի թույլ բայերը ստանում են -t, -d վերջավորություն՝ werken - gewerkt «աշխատել», leggen - gelegd «դնել»:

Անգլերենում կանոնավոր բայերի անցյալի դերբայը կազմվում է -ed վերջավորությամբ, որոշ անկանոն բայերի անցյալի դերբայը՝ -t վերջավորությամբ. ask - asked, play - played, want - wanted, sleep - slept, weep - wept (-ed>-t):

Գերմաներենում -te վերջավորությունը գտնում ենք ուժեղ (անկանոն) և թույլ (կանոնավոր) բայերի II (անցյալ անկատար) և -t վերջավորությունը III

(անցյալ դերբայ) ձևերում. ուժեղ բայեր՝ brennen – brannte – gebrannt, bringen – brachte – gebracht, թույլ բայեր՝ legen – legte – gelegt, sagen – sagte – gesagt:

Համեմատաբանության վերջին շրջանի ուսումնասիրություններում, որտեղ կարևոր նշանակություն են ձեռք բերել նոստրատիկ լեզվաբանության տվյալները, այսպիսի ընդհանրությունները պատահական չեն համարվում: Կարծում ենք, որ մորդվիներենի երկու բարբառներում գտնվող -*з*-ն վերջավորություն ունեցող դերբայների և հայերենի հարակատար դերբայի վերջավորության միջև առկա է հնչյունական և քերականական կապ: Ընդ որում, հայերենի հաշվական պարունակող -*ած* ձևն ավելի հին է, քան մորդվիներենում գտնվող ձևերը: Առավել հին են, հավանաբար, պայթականով ձևերը (օր. լատ.՝ -at-), որոնք քմայնացում չեն պարունակում: Հայերենի հարակատար դերբայի -*ած* վերջավորությունը, հավանական է, հնում ունեցել է նաև -*ատ* ձևը: Ըստ Գեորգիևի հ. -ե. լեզուներում պայթաշխականները շփականների համեմատությամբ զարգացման առավել հին աստիճան են ցույց տալիս, քանի որ հետնալեզվայինների քմայնացումը *e, i, ʔ* ձայնավորներից առաջ, որպես կանոն, ընթացել է հետևյալ կերպ¹¹:

$$k > k' > t' > \begin{cases} t\phi > \text{ի} \\ \dot{c} > \dot{s} > s \\ \dot{s} > \dot{s} \end{cases}$$

Հաշվականի՝ պայթականից ծագելու օրինակներ են՝ լատին. forte – իտալ. forza, լատին. prandium – իտալ. pranzo, լատին. medium – իտալ. mezzo, լատիներեն *t-*ի արտասանությունը –*atio* տառակապակցության մեջ, ուր կատարվել է *տ > ց, ց > ծ* հնչյունափոխությունը: Հայերենում այս հնչյունափոխության արդյունքում առաջացել են բազմաթիվ ծագումնաբանական փոփոխակներ՝ *հորդ* – *հորձանք*, *խեղդ* – *հեղձ*, *բարդել* – *բարձել*, *կայտառ* – *կայծ*, *պղտոր* – *պիղծ*: Նմանատիպ՝ *ձ(տ) // շ* լծորդություն է մատնանշում Գ. Ղափանցյանը խեթերենում, որտեղ *z-*ն Ղափանցյանը համարժեք է համարում *dz* կամ *dž-*ի: Ֆիններենում է պայթականով է կազմվում կատարյալ կերպ ցույց տվող այն դերբայը, որն իմաստով համարժեք է հայերենի հարակատար դերբային՝ *sanoa* «ասել» – *sano-*տա «ասված», *juoda* «խմել» – *juo-*տա «խմած», *hakata* «հատել» – *hakat-*տա «հատած», *sahata* «սղոցել» – *sahat-*տա «սղոցած»:

Սակայն քերականական կազմիչների լեզվական պատկանելության հարցը հնչյունաբանությամբ չի կարող որոշվել:

¹¹ В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 37.

Հայտնի է, որ քերականական կազմիչները ինչ-որ ժամանակ իմաստակիր արմատներ են եղել: Օրինակ, հայերենի *շնորհալի*, *հյուքալի* բառերում *լի*-ն ածանց է, սակայն նրա նախնական իմաստը *լի/լիքը* բառի մեջ է: Անգլերենում կա -ful ածանցը (sorrowful, հ.անգլ. sorrowful) որն առաջացել է full «լիքը» բառից, -less ածանցը (homeless, հ.անգլ. homeless), որն առաջացել է less (հ.անգլ. less) «ավելի քիչ, պակաս» բառից:

Հայերենի *պոչատ*, *կոնատ*, *կիսատ* բառերում -ատ վերջածանցը ծագում է -հատ արմատից. *պոչատ*՝ պոչը հատած, և այլն: Հայերենի -(ա)բար մակբայակերտ ածանցը ծագում է *բար*-ք բառի արմատից (*քաջաբար*, *հայրաբար*), -ա-կալ ածանցը՝ *կալ* արմատից (*մոմակալ*, *ոխակալ*), -ա-ւոր ածականակերտ ածանցը՝ *բեր* արմատից (*լուսաւոր*, *մեղաւոր*), -(ա-հար) ածանցը՝ *հար-կ-անեմ* բայից (*ապշահար*, *նետահար*)¹²: Նման օրինակները կարելի է շարունակել:

Սակայն կան քերականական կազմիչներ, որոնց իմաստը մթազնաժեռ է, քանի որ այն արմատը, որից առաջացել է տվյալ կազմիչը, միևնույն հնչյունական և իմաստային ձևով տվյալ լեզվում այլևս գոյություն չունի:

Հայերենի -ած քերականական կազմիչը ըստ Գ. Ջահուկյանի ծագում է հայերեն *ածեմ* բառից, և նախապես եղել է ածականակերտ և գոյականակերտ ածանց, պատմական շրջանում փոխվել է դերբայակերտ ածանցի:

Ամեն դեպքում, -at- մասնիկը հանդես է գալիս որոշ լեզուներում իբրև բայի կատարյալ կերպ ցույց տվող դերբայի վերջավորություն, որոշ լեզուներում՝ իբրև անորոշ դերբայի վերջավորություն: Քերականական տեղաշարժի երևույթով կարող է բացատրվել սանսկրիտում անցյալ ժամանակի կրավորական դերբայի, հինդիում բայի կատարյալ կերպի և սլավոնական ու մերձբալթյան լեզուներում անորոշ դերբայի ձևերի համընկնումը: Օրինակ՝ սանս.

कर[kar]«անել» - कृत[kṛta] «արված», मर[mar] «մեռնել» - मृत[mṛtá] «մեռած»,

भर[bhar] «տանել» - भृत[bhṛtá], հինդի जानना[jānnā] - जानता[jāntā] «գիտենալ»,

करना[karna] - करता[kartā] «անել», मरना[marna] - मरता[martā] «մեռնել», ռուս.

братъ, греть, держать, ուկր. брати, гріти, держати, լատիշ. ceptināt «տապակել», cept «թխել», küsät «եռալ», rotāt «զարդարել», լիտվ. kelti «արթնացնել», ardyti «քանդել», koseti «հազալ», leisti «թողնել», naikinti «ոչնչացնել»:

Ուսերենում հայերենի հարակատարին համապատասխանող бит/битый, покинут/покинутый, тронут/тронутый ձևերում քերականական կազմիչը փաստորեն համապատասխանում է անորոշ դերբայի վերջավորությանը՝ бить.

¹² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան. Եր., 1987, էջ 249:

покинуть, тронуть: Բուլղարերենում կրավորական սեռի անցյալ դերբայը կազմվում է -ат/-ят վերջածանցով՝ метна «նետել» - метнат «նետված», лея «լցնել» - лят «լցված» և կամ -ан/-ян վերջածանցով՝ писа «գրել» - писан (հոգն. писани) «գրված», живея «ապրել» - живян (հոգն. живени) «ապրած»:

Պատճառական բայեր. Պատճառական (causative) բայերը ֆ.-ուգր. լեզուներում կազմվում են ատամնային բաղադայններով: Վ. Իլիչ-Սվիտչի կարծիքով այսպիսի կազմիչներ հ.-ե. լեզուներում չկան, մյուս լեզվաընտանիքներից նա նշում է ալթայանը (-т), ուրալյանը (-тт-, -т-), դրավիդյանը (-тт-) և սեմաքամյանը (-т-) ¹³: Ֆ.-ուգր. լեզուներում համդիպում են պատճառական բայերի հետևյալ կազմիչները: Ֆիններենում անանցողական բայերից -ta-(-t-ä), -tta-(-ttä-) մասնիկներով կազմվում են պատճառական բայեր՝ juopua «արբել» - juovuttaa «արբեցնել», istua «նստել» - istuttaa «նստեցնել», elää «ապրել» - elättää «պահել, ապրեցնել», pääse «ազատվել» - päästä «ազատել»: Պատճառականի ձև ունեն գոյականից -ta-(-tä) մասնիկով կազմվող այսպիսի բայերը՝ alus «հիմք» - alustaa «հիմնադրել», jää «սառույց» - jäätää «սառեցնել», puoli «կես» - puolittaa «կիսել», kirja «գիր» - kirjoittaa «գրել», kuorma «բեռ» - kuormittaa «բեռնել»: Պատճառականի մի այլ ձև են ներկայացնում հետևյալ բայերը՝ kirjoittaa «գրել» - kirjoittaa «գրել տալ», kastella «ջրել» - kastelluttaa «ջրել տալ»: Էստոներենում գտնում ենք՝ jooma «խմել» - jootma «խմեցնել», hapnema «թթվել» - hapendama «թթվեցնել», elama «ապրել» - elatama «պահել, ապրեցնել», sulama «հալվել» - sulatama «հալեցնել»:

Կոմի լեզվում -öd-, -т-, -д- մասնիկներով կազմվում են՝ катны «բարձրանալ» - катодны «բարձրացնել», бырны «վերանալ, անհետանալ» - бырödны «վերացնել, ոչնչացնել», пузьыны «եռալ» - пузьödны «եռացնել», налъ вурны «կարել» - вурödны «կարել տալ», гижны «գրել» - гижödны «գրել տալ»:

Ուղմուրտերենում -т մասնիկով են կազմված пöзьыны «եփվել» - лозьыны «եփել», оськыны «հավատալ» - оськытыны «հավատացնել» ձևերը, որոնք, սակայն, ընդհանուր օրինաչափություն չեն:

Հունգարերենում պատճառական բայերի կազմիչներ են համարվում -tat, -tet, -at, -et մասնիկները՝ hullani «ընկնել» - hullatni «զգցել», kelni «բարձրանալ» - keltetni «վեր կացնել», fűrdeni «լողանալ» - fűrdetni «լողացնել», tanulni

¹³ В. Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков, М., 1971, т. 1, с. 13.

«սովորել» - *tanitani* «սովորեցնել», ածականից կազմվում է՝ *hūs* «հով» - *hūseteni* «հովագնել», *gōrbe* «ծուռ» - *gōrbiteni* «թեքել»:

Երգյաներենում պատճառական բայերը կազմվում են -до-, -де-, -то-, -те-, -вто-, -вте-, -сто-, -сте-, իսկ մոկչաներենում՝ -фт-, -фн-, -пт-, -пн- մասնիկներով: Տարածամանկյա վերլուծությամբ *в, ф, п* շրթնային հնչյունները պետք է առանձնացվեն այս կազմիչներից: Դրանք *п* ձայնորդի հնչյունափոխության արդյունք են և պատճառականի հետ կապ չունեն՝ երգ. *касомс* «աճել» - *кастомс* «աճեցնել», մոկչ. *стамс* «կարել» - *стафтомс* «կարել տալ»:

Կրավորական սեռի կամ անդրադարձ բայեր: Հայերենի կրավորական սեռի բայերին որոշ լեզուներում համապատասխանում են անդրադարձ բայերը: Հայերենի կրավորական սեռ արտահայտող -վ- կազմիչին համարժեք կազմիչներ *h.-ե.* լեզուներում չկան: Դրանք գտնված են սեմաքամյան, կովկասյան, ֆիննաուգրական լեզուներում¹⁴: *Ֆ.-ուգր.* լեզուներում գտնում ենք՝ *ֆինն.* *valaa* «լցնել» - *valua* «լցվել», *kuulla* «լսել» - *kuulua* «լսվել», *valmistaa* «պատրաստել» - *valmistua* «պատրաստվել», *pelastaa* «փրկել» - *pelastua* «փրկվել»: Մորդովիներենում անդրադարձ բայերը կազմվում են -во-, -ве մասնիկներով. երգ. *ловомс* «հաշվել» - *лововомс* «հաշվվել», *керчамс* «խճել» - *керчавомс* «խճվել», մոկչ. *токамс* «խփել» - *токавомс* «խփվել», *няемс* «տեսնել» - *няевомс* «երևալ»: Մանսերենում կրավորականի կազմիչն է՝ -ве-, -аве. *вари* «անում է» - *вараве* «արվում է» և այլն: *Ֆ.-ուգր.* լեզուներում կրավորական սեռի բայեր են կազմվում մաև -л կազմիչով, որը համարժեք է զրաբարյան -եալ կազմիչին՝ հունգ. *fordulni* «շրջվել», *gurulni*, *gördülni* «զլորվել», *görbülni* «թեքվել», *közölni* «կիսվել», *zöldülni* «կանաչել»:

Ներկայի դերբայ: Այս դերբայը հայերենում վաղուց կորցրել է իմաստը, իսկ --անդ-/ունդ կազմիչը վերածվել է ածանցի՝ *հիւանդ, եռանդ, աղանդ, ելունդ, սերունդ, սնունդ, ծնունդ*, սակայն համարժեքը կա բազմաթիվ *h.-ե.* լեզուներում՝ սանս. *गच्छन्त[gaçc'ant]* «զնացող», *लिखन्त[lik'hant]* «գրող», *अवन्त[ab'avant]* «գոյություն ունեցող», *वसन्त[vasant]* «ապրող», հուն. *έδοντ* «ուտող», *φεροντ* «բերող», լատին. *edent-* «ուտող», *amant-* «սիրող», իտալ. *parlante* «խոսող», *cantante* «երգող», *segunte* «հետևյալ», շվեդ. (-*ande*, -*ende*) *kalla* «կանչել» - *kallande* «կանչող», *finna* «գտնել» - *finnande* «գտնող», *sy-ende* «կարող», *gående* «զնացող». նորվ. *kaste* «նետող» - *kastende*, *lese* - *lesende* «կարդացող», *bære* -

¹⁴ A. Trombetti, *L'unità d'origine del linguaggio*, Bologna, 1962, p. 116-117:

bærende «տանող», հոլ. werk-end, slap-end, gaa-nd, հանգլ. beran «տանել» - berende, seczan «ասել» - seczende, լիտվ. ներկայի դերբայ (деприч. наст. времени) dirba - dirbant, liepa - liepant, prašo - prašant, nori - norint, būti - esant:

Ֆ-ուզը. լեզուներում ներկա ժամանակի դերբայը գոյականացած է, ինչպես հայերենում՝ ֆինն. -nta/-ntä, hieroa «տրորել» - hieronta «մերսում», kosia «հարսնախոսել» - kosinta «հարսնախոսություն», etsia «փնտրել» - etsintä «փնտրուք», -nto/-ntö, oja «առու» - ojanto «առվի հուն», kesa «ամառ» - kesanto «արոս, ցել», kaivaa «փորել» - kaivanto «փոս, խրամատ», sopia «պայմանավորվել» - sovinto «համաձայնություն», asua «ապրել» - asunto «բնակարան, կացարան», elaa «ապրել» - elanto «սնունդ, ապրուստ»:

Հայերենի, հ.-ե. և ֆ-ուզը. մի շարք դերբայական կազմիչների համեմատությունը ցույց է տալիս, որ

ա/ դերբայների համեմատությունը առանձին-առանձին թույլ չի տալիս լիարժեք պատկերացում կազմելու նրանց ընդհանրությունների, ինչպես նաև հնարավոր միասնական ծագման մասին:

բ/ պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցած քերականական իմաստի փոփոխության հետևանքով (քերականական տեղաշարժ) որոշ կազմիչներ վերածվել են քերականական այլ իմաստ արտահայտող կազմիչների:

գ/ Միևնույն քերականական կազմիչը մեկ լեզվում կազմում է անորոշ դերբայ, մյուսում՝ հարակատար դերբայ, մեկ ուրիշ լեզվում՝ կրավորական սեռ:

դ/ հայերենի -առ/-ար/-ան ձևային շարքին համապատասխանող կազմիչի նախնական իմաստն է «անել», -եալ /-ել/-ալ շարքի կազմիչների նախնական իմաստն է՝ «լինել»:

NON-FINITE FORMS OF THE VERB IN THE ARMENIAN, OTHER INDO-EUROPEAN AND SEVERAL FINNO-UGRIC LANGUAGES

The comparison of none-finite forms of the verb (verbals) in the Armenian, other Indo-European and several Finno-Ugric languages shows that

a) the comparison of the verbals separately doesn't give a distinct view of common features, as well as of the possible common origin of the grammatical formants,

b) due to the long process of historical development a change in the grammatical meaning of the formants and, therefore, in that of the verbals took place (grammatical shift),

c) variants of the same grammatical formant are spread in different languages, including languages of different language families,

d) the primary meaning of the formants, corresponding to the Armenian allomorphic group -¹é/-¹ñ/-¹ŷ is "to do", and the primary meaning of the formants -²Ē /-²Ē/-²Ē is "to be".